



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌԵԺԻՐ, 1865 — ԻԱ ՏԱՐԻ. — ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱՇՈՏ Ա

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ

(Տես յերես 145 — 177 — 209 — 244 — 273)

ԺԶ. Աշոտ չորս տարւոյ չափ՝ միայն թագով փառաւորեցաւ կամ փառաւորեց զՀայաստան. թերեւ այսչափ կարճ ժամանակն և զբաղմանց չափով թիւնն բաւական չէր նորահաստատ թագաւորութեան և նորէն միազլխեալ ազգին ամէն հարկաւոր կարգերը դնելու և հաստատելու. սակայն Աշոտ ոչ միայն զկարելին ըրաւ, այլ և շատոնց անկարելին այլ: Մնացեալ պատմաց կարճ յիշատակներն մեզի կ'իմացնեն, որ բոլոր ժամանակն անցուց, մէկ մը թագաւորավայել կարգօք և շինութեամբք, ինչպէս քիչ մ'առաջ իմացուց մեզի Յովհ. կաթողիկոս, և ուրիշ

մ'այլ կ'ըսէ. « փափկացեալ և յղիւս » ցեալ ուրախութեամբ . . . քաջալա » յեղադոյնս զթագաւորութեանն կա » տարեւադործեալ զժամանակն ». մէկ մ'այլ՝ արժանապէս 'ի շնորհակալութիւն աստուածային խնամոց՝ որ այս յաջողութիւնը տուաւ իրեն և ազգին Հայոց, սրբազան տաճարներ կանգնելով անոր, ինչպէս վկայէ իր վարքը համառօտողաց մէկն. « Պսակեալ նա յեր » կուց թագաւորացն՝ եղև ճոխ թագա » ւոր. և արար խաղաղութիւն և շինու » թիւն աշխարհին Հայոց. շինեաց և » բազում եկեղեցիս փառաւորս » : Որչափ մարդկան առջև բարձրացաւ և տիրացաւ, այնչափ աւելի զինքը խոնարհեցուց և ծառայեցուց Աստուծոյ՝ զգաստ և խոհեմ թագաւորն. որ գիտէր իւրաքանչիւրին իրեն վայլածը տալ թէ Աստուծոյ, թէ մարդկան և թէ իր

1 Թէ և ոմանք 'ի պատմաց հինգ տարի կ'ըսեն թագաւորութեանն, այլ սխալ է. բայց եթէ Քրիստոսի թուականաւ 887էն սկսելով 891ի ըսկիզբն այլ հաշուեն, հինգ տարի կ'ըլլայ կտորնէրով, բայց ամբողջ և ոչ չորս տարի :

անձին և աստիճանին : — Երրորդ ընե-
լիքն կամ գործն այլ էր իր հին կամ սո-
վորական զբաղմունքն. այսինքն արթնու-
թեամբ զիտել բոլոր իր իշխանութեան
և պաշտպանութեան տակ եղած աշխար-
հաց և գաւառաց հանդարտութիւնը , և
նուիրակօր կամ զօրօր կամ անձամբ կար-
գի և խաղաղութեան բերել խռովեալ-
ները և գրգռեալները . և յայսմ՝ ոչ թա-
գին նայելով և ոչ ծերութեան իր սպարա-
պետ եղած տարիներուն պէս ինչուան
մահուն տարին այլ անդադար գործե-
լու , շարժելու , տեղէ տեղ փութալու
երթալու գալու հետ էր , իբրև երիտա-
սարդ նահատակ ամէն վտանգի մէջ
յառաջագէմ վազելով և միշտ յաղթող
կամ փրկող դառնալով . 40 տարի ոչ
դք կրցաւ զլուխ քաշել կամ ազատիլ
իր ամենահաս երագութենէն և ոչ դք
վտանգի իրեն ապաւինողներէն . միայն
մահն կրցաւ զինքը դադրեցնել , այն այլ
դարձեալ ճամբու վրայ հանդիպեցաւ ,
անոր բարեկարգիչ արշաւանաց մէջ :
Որոնք որ հասկրցան խաղաղութեան օ-
գուտը՝ կակուղ բազկաւ երկընցուց ա-
նոնց վրայ թագաւորական գաւազանը .
իսկ որոնք դեռ խռովութիւն կամ բռ-
նութիւն սիրէին , իմացուց անոնց որ
գաւազանին հետ դեռ զէնք այլ կրնայ
վերցընել իր քաջակորով ձեռքն . որոյ
համար համառօտ գրութեամբ վկայէ
ժամանակակիցն (թովմաս) , թէ մինչև
'ի մահն՝ « Ձեռն նորա յամենեալն , և
ամենեցուն ձեռք 'ի նա » :

Այս ետքի տարիներուս մէջ յիշուած
գլխաւոր դիպուածքն և գործք Աշոտոյ
եղան մէկ մը հիւսիսային և կովկասեան
կողմերը , մէկ մ' այլ իր անհանդարտ
Արծրունի փեսային հոգերը . որ վերջա-
պէս իր անխոհեմ շարժմանց զոհ եղաւ :
Զգուշութեամբ մը այս ճամարտութիւնը
խոստովանի ծանր և կշռաբան կաթու-
ղիկոս պատմիչն . « Գրիգոր որ Դերենիկն
» անուանէր , և էր նա այր սէգ և ըզ-
» գաստ և սօս 'ի գնացս ոտից , և զօրաւ
» ւոր արդեամբք և բանիւ . և տնօրի-
» նէր միշտ յամենայն բարեձևութիւնս
» բերիլ : Եւ վասն զի փեսայացեալ էր

» նա Աշոտոյ . . , սակս այնորիկ հայ .
» րախնամ կամօք և խոհական սիրե-
» լութեամբ միշտ խրատ բարեաց նմա
» մատուցանէր , որոյ և յ'սկզբան անդ
» ընկալեալ հլու և զգօն մտօք՝ հաւա-
» նէր ընդունել , և յօտին զբոլոր թըշ-
» նամիս 'ի սադրելոյ կացուցանէր , և
» խաղաղութեան և շինութեան պա-
» րապեալ՝ յապահովս 'ի բնակութեան
» իւրեանց պատրաստէր զհայրենի տէ-
» րութիւնն իւր 'ի բոլոր հինից . Բայց
» յետոյ 'ի կամս անձին զինչպիտու-
» թեան բերեալ , ոչ անսայր բանի խրա-
» տու աներոյ իւրոյ , որպէս յերեկն և
» յեռանդն . և չլինէր նմա այն յաջո-
» ղումն ինչ 'ի բարութիւնս » :

Ոչ թէ միայն բարւոյ յաջողութեան
արգելեղաւ Դերենիկայ կամապաշտ զինչ
պիտութիւնն , այլ և չարի պատճառ և
անդարման չարի : Վերն յիշեցինք իր
քեռորդին Հասանիկը բռնելը և արձա-
կելը . երկուքն այլ խարդախ ճամբա-
ներ գացին , երբեմն իրարու դէմ , եր-
բեմն իրարու կողմ . այս անգամ այլ
(Աշոտոյ թագաւորութենէն քանի մ'ա-
միս ետքը) Դերենիկ արձակեց զՀասա-
նիկ որ անոր ձեռքով ուրիշ մը բռնէ .
այս որսն էր Գագիկ Ապուհրուան ը-
սուածն , որդի վահանայ , Արծրունի
մեծապատիւ իշխան մը , որ հետ իր հօրն
և Դերենիկայ և անոր հօրն՝ Բուղայէն
բռնուած և գերի գացած էր , և խնամի
էր իր մօրը , որով և թագաւորին . հի-
մայ Դերենիկ ասոր վրայ կասկածելով
թէ Աշոտ կուրապաղատին (Յարօնոյ)
համախոհ էր , խոստացաւ Հասանիկայ՝
իր Սեան բերդը և երկիրները յետ գար-
ձընել , եթէ բռնէ և իրեն բերէ զԳա-
գիկ . որ կասկածելով իրմէ՝ ամրացեր
էր 'ի ճահուկ բերդի , Կորդուաց աշ-
խարհին կողմերը : Հասան իբրև փա-
խըստական 'ի քեռւոյն՝ գնաց և խաբեց
զԳագիկ , և հոս այլ իր հնարքը բանեցը-
նելով , կեղծ հիւանդութիւնը , ապա-
հովցուց իր հիւրընկալը . և անոր քնա-
ցած ատեն՝ բռնեց և երկաթի շղթանե-
րով բերաւ առ Դերենիկ . սա այլ խաւ-
րեց 'ի վան , պահել 'ի բերդին . իր տիկ-

նոյն այլ յանձնեց, որ այն ատեն 'ի վան էր, զգուշանալ որ չփախչի բանտեալն: Այս բանս 'ի հարկէ մեր թագաւորին անհաճոյ էր. բայց տհաճութիւնն աւելի գրգռել կու ջանայր այն ոխակալ Եմէնիկն, որ նախ զԴերենիկ հրապուրեց ինքն իր գլխուն գործելու և անելով չհարցնելու, և զԱպլիառ կայսիկն այլ նորէն շարժել ուզեց, նոյնպէս զուրիշներն այլ. յետոյ խորամանկութեամբ մէկ կողմէն առ Աշոտ գրեց Դերենկայ վրայօք՝ որպէս թէ ապստամբօրէն ուզածը կ'ընէ և կ'արհամարհէ զթագաւորն. մէկ այլ կողմէն ձայն հանել տրւաւ թէ Աշոտ թագաւոր Դերենկայ նեղացեր և կ'ուզէ բռնել զնա:

Դերենիկ զամենքն այլ արհամարհելով՝ աշնան վերջերը (887) ելաւ երթալու 'ի Մառաշկան աւանն, որ Երասխ գետոյ մօտերն է, վասպուրական աշխարհին հիւսիսային կողմերը, ճուաշ գաւառին մէջ, և հին ատենէն 'ի վեր այն աշխարհին տեսարց ձմերանոցն էր, խորագիր և տաքուկ տեղ մ'ըլլալով: Շիտակ և մեծ ճամբով երթալու համար պէտք էր անցնիլ Հերայ գաւառէն. այս երկիրս որ հիմա Խոյ կ'ըսուի և Պարսից իշխանութեան տակ է, հին ատեն մեր Պարսկահայոց առաջին գաւառն էր, բայց աշխարհագրական դիրք աւելի վասպուրականի մաս կրնար ըլլալ, և այնպէս այլ եղած էր. այս պատմութեան ատեն և աւելի առաջ արաբացի կողմնակալ մը կու տիրէր հոս, բայց Ապահունեաց և Խլաթայ իշխանաց պէս՝ Աշոտոյ իշխանութեան տակ, և երկրին մերձաւորութեամբն՝ կերպով մը Դերենիկ այլ իրաւունք ունէր անոր վրայ. կողմնակալն՝ որ Ապլ-փէրս անուանէր՝ գիտնալով անոր միտքը, միանգամայն վախնալով 'ի թագաւորէն, երկուքին այլ հպատակութիւն և բարեկամութիւն կու ցուցնէր. իսկ հիմայ անշուշտ Եմէնիկէն սիրտ առած՝ խարդախութեամբ անզգամեցաւ: Իր վրայ այլ կասկածողք կային, և իմացուցին Դերենկայ որ ըզգոյշ կենայ ճամբան. ոմանք այլ կ'ըսէին որ թագաւորն պիտի բռնէ զինքն:

այս բանէս կրնար ապահով ըլլալ, բայց ոչ նոյնպէս այլազգիէն: Դերենիկ սովորական յանդգնութեամբն յառաջ անցաւ, մտաւ Հերայ (Խոյի) գեղեցիկ դաշտավայրը և իջաւ 'ի գեղն փռոտակ, քաղաքին մօտ: Քաղաքապետն իր պատրաստութիւնները տեսնելէն ետեւ՝ հրապիրեց զԴերենիկ 'ի քաղաքն. նա յանձն չառաւ հոն երթալու, բայց միայն ճամբուն վրայ տեսնուելու. և երբ ինքն երկրորդ օրն որսի ելեր էր, քովիններն նորէն ազդեցին իրեն որ հեռանայ անկէ. նորէն չի լսեց: Մէկ մ'այլ իմաց տուին որ Ապլփէրս կու գայ զինքը բարեւելու. Դերենիկ տեսաւ անոր թիկնապահ զօրաց գունդը որ իբրեւ 'ի պատիւ իրեն դիմաց գային. մտրակեց և « ճեմն ա » ռեպ սիգաքայլ երիվարաւն՝ եհաս... » միայն և առանձինն 'ի յառուամէջ » տեղով » , այնպէս տեղ մը որ երկու կողմէն այգիներ էին, մէջէն յորդասահ առու մը կ'անցնէր, և ոչ ոք համարձակէր անկէց անցնիլ. Դերենիկ մէկ մ'այլ մտրակեց զձին և միջոց ջուրը, ցատքեց այն դին. մէկէն հոն շարուած այլազգի զօրքն երկու բաժնուելով թողուցին որ մէջերէն անցնի կտրիճն. սա անխոհեմաբար մինակ յառաջեց, Ապլփէրս այլ դիմացն ելաւ, « և զիրկս զպարանոցաւն » արկեալ՝ տայ զյուզայեանն համբոյր». այն ատեն զօրքն ետեւէն պատեցին զնա. ոմանք ձիուն սանձը քաշեցին, ոմանք վրայի սուրը բռնեցին, ուրիշներն այլ սրով և նիզակաւ կռնակէն զարկին. վար ձգեցին. ինկնալու ատեն միջոցած աշուրներն ողորմուկ յետ դարձուց՝ օգնական պաշտպան փնտռելու. բայց իրեններն ջրին այն դին էին, և չփոխելով ու վախնալով փախան. միայն Ամատունեաց ցեղին գլխաւոր իշխանն տիրասիրութեամբ բռնուեցաւ: Քաղաքին Հայ վաճառականքն զնեցին Դերենկայ մարմինը, և իշխանաց պատուով պատեցին. այն տեղի եպիսկոպոսն Դաւիթ այլ արժանաւոր յուզարկաւորութիւն ըրաւ, և թաղեց եկեղեցւոյն մէջ. ինչուան որ յետ ժամանակի՝ մեռելոյն անդրանիկն եկաւ առաւ հօրը մարմինը և տա-

բաւ հանգչեցուց Արծրունեաց հին քնա-
րանը, 'ի վանքն խաչի որ 'ի Հաղամա-
կերտ Աղբակայ: Բայր Վասպուրական
աշխարհն տասն ամիս սուգ ըրաւ Դե-
րենկայ վրայ, որ իբրեւ 40ամեայ էր մե-
ռած ատեն. իսկ իր անդրանիկն հազիւ
տասնամեայ:

Աշոտ թագաւոր, որ այս միջոցիս կող-
կասեանց հոգով զբաղած էր՝ խաւրեց
իր ժիր նուիրակ Շապուհ որդին, որ իր
համանուն թոռը զԱշոտ զանդրանիկն
Դերենկան՝ ժառանգեցընէ հօրը ակօ-
ռոյն, և անոր մայրն այլ քաջալերէ,
(Սոփի տիկինը) որ երկանը մահուան
վրայ շատ սրտակոտորեր էր. և հիմայ եղ-
բայրը տեսնելով և զանդրանիկն այլ
Արծրունեաց տէր դրուած՝ քաջալերե-
ցաւ, և սկսաւ ոչ միայն մօր պէս այլ և
թագուհւոյ պէս խնամել որդիքը և զաշ-
խարհը. հարցուց հօրը՝ Ապուստոլանին
վրայ, և պատուէր առաւ որ արձըկէ ու
սիրով պատուէ, և որդւոցը խնամակալ
կարգէ, ինչուան որ չափահաս ըլլան,
և կարենան ինքնիրեննուն կառավա-
րել: Յաջորդ տարւոյն (888) ետքերը Ա-
շոտ թագաւոր՝ վրաց գործերը շտկած
ըլլալով, անձամբ եկաւ 'ի Վասպուրա-
կան, դուստրը (Սոփի) և թոռները միւի
թարելու հայրաբար. միանգամայն և
խնամակալ թագաւորի պէս նորէն հան-
դիսիւ հաստատեց զԱշոտ թոռը 'ի տէ-
րութեան Արծրունեաց, անոր երկու եղ-
բայրն այլ պատշաճ պատիւներ և իշխա-
նութիւններ տուաւ. նոյնպէս զԱպու-
ստոլան այլ հաստատեց անոնց խնա-
մակալութեան և պաշտպանութեան մէջ,
կառավարութիւնն այլ յանձնելով Սո-
փի տիկնոյ, և ամէն բան կարգի դնե-
լով՝ դարձաւ իր տեղը:

Կովկասեանց կամ վրաց չփոթու-
թեան պատճառն՝ մէկ մ' էր այն ներ-
սեհն՝ զոր նախ յիշեցինք. մէկ մ' այլ Ափ-
խազաց թագաւորը՝ որ իրարմէ կույա-
փըշտակէին թաղը. այսպիսի էր Յով-
հաննէս թագաւորն, որ զրկելով զԲա-
ղարատ զորդի Դեմետրի թագաւորի,
իր որդին Ատրնեբսհը թագաւոր դրաւ՝
մահուան ատենը (879). Բագարատ փա-

խաւ 'ի Կ.Պօլիս և քանի մը տարիէն դառ-
նալով՝ իր կուսակցաց օգնութեամբ ըս-
պաննեց զԱտրնեբսհ և տեղն անցաւ
(887) անոր այրին այլ առաւ 'ի կնու-
թիւն, որ էր քոյր Ներսեհի. և զսա այլ
կանչեց 'ի Յունաստանէ, և բաւական
զօրք տալով՝ անոր ուղածին պէս թու-
ղուց որ կոխէ վրաց երկիրը և խլէ ա-
նոր երիտասարդ իշխողէն, որ էր անուա-
նին Ատրնեբսհ (որդի Դաւթի) և իր
հայրենիքը ժառանգեր էր մեր Աշոտոյ
խնամակալութեամբ, մինչդեռ սա այս
միջոցիս նոր թագաւորեր և քաղաքա-
կան կարգադրութեանց զբաղեր էր:
Ատրնեբսհ իրեն օգնական գտաւ զԻ-
պարիտ, նախահայր մեծ և անուանի
տոհմին Ուուպելեանց, որ թուեղաց գա-
ւառին կուտիրէր. և զԴուրդէն՝ Տայոց
մէկ մասին տիրող կուրապաղատն. մեր
թագաւորն այլ օգնական գտնող մը խաւ-
րեց. որովք Ատրնեբսհ սիրտ առաւ իր
հակառակորդին՝ Ներսեհի դէմ ելլե-
լու. Ախալցիխէի կողմերը, կուր գետոյն
եզերքը հանդիպեցան իրարու. և սաս-
տիկ պատերազմ եղաւ. որովհետեւ ներ-
սեհի և Ափխազաց հետ միացեր էին Ա-
լանք կամ Օպը այլ. բայց վերջապէս ա-
նոնք յաղթուեցան, Ներսեհ բռնուե-
ցաւ և սպանուեցաւ (888) յԱսրինձա
աւանի (յարեւելակողմն Ախալցիխէի):
Ասկէ վերջը կ'երեւի թէ Աշոտ թագա-
ւոր անձամբ եկաւ այս կողմերս և օրի-
նաւոր իշխանաց յանձնեց. անկէ մըտ-
նելով կովկասաց լեռանց մէջ՝ նուաճեց
վրաց թշնամիները և Ներսեհի նիզա-
կակիցները, զԱլանս և ուրիշ լեռնա-
բնակ ցեղեր. որոց համար կ'ըսէ կա-
թողիկոս պատմիչն. « Ձեռն զհիւսի-
» սական կողմամբն արկեալ, 'ի ծործորս
» մեծի լեռինն կովկասու, որ 'ի հովիտս
» և 'ի դաշտս երկայնագոգս բնակեալ
» էին ազգք, ընդ իւրեաւ հնազանդե-
» ցուցանէր»: Մեր օրերս անգամ յայտ-
նի է, թէ որչափ ոյժ և խեղճ պէտք է
կովկասեան այն բնապարիսպ լեռանց
ազատ որդիքը սանձելու կամ ասպա-
տակութենէ զազրեցնելու. զոր մեր և
Պարսից հին թագաւորաց շատերն այլ

չէին կրցած աւելի անոնց անմատոյց բոյները :

Աշոտ իր խնամոց յանձնուած երկրին հիւսիսակողման մէջտեղուակքը հանդարտեցնելէն ետեւ անոր երկու ծայրերն այլ նուաճեց, որ կերպով մը աւելի զբոլար էին . վասն զի արեւելեան կողմը կ'իջխէին Ուտիացիք, որ են հին Հայոց 15 աշխարհաց մէկն, Աղուանից, Վրաց և Կովկասեանց սահմանակից . որոց նման իրենց երկիրն այլ լեռնոտ և ամուր բլլալով, հոս կտրիճ բայց և անկիրթ իշխանք իրենց ազատութիւնը պահած էին Հագարացոց բռնութեան ատեն այլ ասոնց մեծ իշխանն էր Ստեփանոս Կոն՝ որ եկաւ առ Բուղա, և նահատակուեցաւ 'ի Բաբելոն . այս կողմերուս հին Հայկազանց ժամանակէն տիրող Սեւուկ նահապետին անուամբ, այս ատեններս այլ Սևորդիք անուամբ ծանօթ և ահարկու էին մերձաւորաց և Արաբացոց, իրենց շինած կտրուկ սրովն : Արդ հիմայ Աշոտ « զելուզակուտ մարդիկ Ուտի գա » ւառի առհասարակ ընդ ձեռամբ նը » ւաճէր, 'ի բաց 'ի նոցանէ հերքելով զա » ւազակութիւնն մարդադաւուրեան , » և իբրեւ օրինաւորս և հլուս զամենե » սեան կազմէր, և առաջնորդս և իշ » խանս նոցա կացուցանէր » : — Իսկ աբևմտեան սահմանաժայրն էր՝ Ափխազաց երկիրն կամ Եգերաց, որոց թագաւորն՝ սահմանակից տիրապետաց մէջ ամենէն զօրաւորն էր, ինչպէս առաջ այլ յիշեցի, միանգամայն և ինքնազուլ թագաւոր ճանչցուած . հիմայ Բագարատ Ներսէհի կողմը բռնելով՝ Հայոց այլ թշնամացեր էր, բայց նախ անոնց զէնքովը յաղթուելով, յետոյ Աշոտոյ մարդասիրութենէն, խոնարհեցաւ 'ի հաշտութիւն և 'ի դաշնակցութիւն, և որդիաբար մեծարելու իրմէ մեծ թագաւորը . ինչպէս վկայէ և վերոյիշեալ պատմիչն մեր . « Այլ և զթագաւորն ևս Ե » զերացոց 'ի սէր միաբանութեան ընդ » իւր կապակցեալ այնպէս նմա այցելէր, » մինչ զի անընդհատ յորդիութեան սա » կի գոլով՝ մտերմաբար պարտաւճար » միշտ նմա 'ի ծառայութիւն բերէր » :

Այս զժուարին գործերը յաջողութեամբ ընցընելէն ետեւ էր որ Աշոտ թագաւոր գնաց 'ի Վասպուրական, իր թուանց ժառանգութիւնը և իշխանութիւնը կարգի դնելու . նոյնպիսի կարգաւորութիւն մ'այլ բրաւ Սիւնեաց երկրի մէջ . վասն զի զրեթէ նոյն ատեն մեռաւ Վասակ իշխանիկ՝ երկրին մեծ իշխանն . Աշոտ անոր եղբայրը և իր անուանակից Աշոտը հաստատեց 'ի նահապետութիւն Սիւնեաց . և երկուքին որդոց ժառանգութիւններն այլ որոշեց . այս Աշոտս այլ իր եղբորը (Վասակայ) պէս հլու և հաւատարիմ՝ եղաւ մեր թագաւորին, և յետոյ ասոր որդւոյն՝ Սմբատայ : — Իսկ մէկայլ Սիսական Վասակն՝ փեսայն թագաւորին՝ շատոնց մեռեր էր երիտասարդ հասակաւ, և այրիացեալ տիկինն Մարիամ՝ երեք կտրիճ որդւովքն Սեանայ ծովուն եզերքը կու շէնցընէր վանքերով և եկեղեցիներով թէ հօրն ատեն և թէ իր եղբօրը՝ Սմբատոյ՝ թագաւորութեան ժամանակ : — Բայց իր քոյրն Սոփի՝ այրին Դերենկան՝ իրեն պէս երկարակեաց չեղաւ . էրկանն չարաչար և ցաւազին մահն անբժշկելի վէրք բացեր էր սրտին մէջ . քսան ամեն (889) « և ինքն Սոփի անհամեմատն 'ի » կանայս՝ ըստ նմանութեան ամուսնա » սէրտատրակի հրաժարեալ յամենայն » վայելչութեանց կենցաղականացս , » խանդակաթ լինելով, ոչ ժուժեալ սրը » տին նեղութեան . . . փոխի յաշխար » հէս . խաղաղութեամբ ննջեալ ընդ » հարս իւր . թողեալ զմանկունսն տը » ղայս և անկատարս հասակաւ » . որք մեծ ցաւով և սգով տարին մարմինը հանգուցին Դերենկայ քով : Շահասէր իշխանը և զօրաւորը կու փափագէին խաբել որբացեալ իշխանորդիքը, « այլ ոչ իշխէին յերկիւղէ մեծին Աշոտոյ թագաւորին Հայոց » որ իր կորիւն թոռները առաջուրնէ աւելի հայրաբար խնամեց ինչպէս իր բնիկ իշխանական աշխարհն և ուրիշ պաշտպանեալ աշխարհներն այլ շէնցընելով, դեռ տարի ու կէս, մինչև իր վախճանն, որ կենացն համեմատ եղաւ արժանաւոր և փառաւոր :

ԺԷ. Աշոտոյ հին նախահաւն և նախօրինակն իշխանութեան, առաջին սուրբ և տօնելի թագաւորն Դաւիթ մարգարէ, մարդուս կենաց կարողութեամբ վայելելի սովորական չափն ըսաւ 70 տարի. ինքն այլ նոյն տարին չանցաւ. իր առաջին քրիստոնեայ սրբակաց թագաւորն պայազատն՝ Աշոտ այլ զրեթէ նոյն շրջանը բոլորեց և կնքեց, 71 տարին. 'ի վերջ 890 թուականին Գրիստոսի, կամ թերևս 'ի 4 փետրուարի 891ին. վասն զի այս օրուանս զուգակցի մարերի 20ն (յորում անոր յիշատակն դրուած է) ՅԼԹ թուականին Հայոց, յորում մահն նշանակի: — Թէպէտ և կենաց վերջին երկու տարիներուն մասնաւոր դիպուած մը չի պատմուիր, բայց՝ ինչպէս նախ յիշեցինք՝ Աշոտ անդադար էր հարկաւոր գործոց մէջ, որոց հաղորդ և ընկեր էին չորս կտրիճ, չափահաս և բարեկիրթ որդիքն. որոց անդրանիկ Սմբատը, զոր իշխանաց իշխան անուանեց էր, այն աւտեն խաւրեր էր զօրօք Գուգարաց կողմերը, դարձեալ վրահայոց մէջ ծագած շփոթութիւն մը խաղաղցընելու, կամ ապստամբները նուաճելու, ինչպէս կ'ըսէ ժամանակակիցն Յովհ. կաթողիկոս, և ուրիշ բան չաւելցընել. իսկ վրաց պատմիչն կու յիշէ, որ նոյն աւտեն Գուրգէն կուրապաղատ մեր թագաւորին քեռայրն՝ իր Տայոց ֆալմախ իշխանանիստը և Արտանուշ մեծ քաղաքը թողով, գնաց բնակելու Շաւշէթի և Արտահաշու կողմերը, որ Գուգարաց արևմտեան գաւառներն են, և որոց վրայ առաջ ուրիշ իշխան կար, և շատոնց վրաց իշխանապետին պաշտպանութեան տակ ընկած էր. հիմայ այս բանս տհաճութեան և կուռի պատճառ եղաւ Ատրոնեբանհի՝ վրաց գլխաւորին և Գուրգենայ մէջ. ինչուան պատերազմի ելան Արտանուշայ դաշտին մէջ. Գուրգէն յաղթուեցաւ և վիրաւորեցաւ. և վերջը նոյն վիրաց ցաւով մեռաւ (894): Թուի թէ այս կամ ասկէ պատճառած դիպուածի համար էր հոն դրկուած Սմբատ. մինչդեռ հայրն գուցէ ուրիշ գործ մը շտկելու համար ձմեռ աւտեն ճամբայ և

լեր էր իր բնաշխարհին մէջ, երբ վրան ծանր հիւանդութիւն եկաւ. և չկարենալով աւելի առաջ երթալ կամ յետ դառնալ, դադրեցաւ 'ի Քարսպառ ըսուած ապառաժոտ բարձրահայեաց սարատափ տեղ մը. որուն աշխարհագրական դիրքն անձանօթ է ինծի, և կարծեմ յԱյրարատ գաւառի:

Այն Քարսպառ գահաւանդն եղաւ Աշոտոյ կենաց սպառիչ սահմանաքարն. և անոր բարձրութենէն դարձուց աշուրները յետս՝ իր եօթանասնամեայ կենաց ընթացից վրայ, և 'ի վեր՝ հանդերձեալ կենաց անսպառութեան վրայ: Մարդոյ, և մեծիշխան մարդոյ արժանափայլ էր կտրած ընթացքն, կրնար անվախ նայիլ և ըսել, « Չընթացն կատարեցի » . հայրենեաց, եկեղեցւոյ և ընկերակցաց համար էին իր երկայն աշխատանքներն և մրցանքն. կրնար այլ ըսել, « Չբարւոք պատերազմն պատերազմեցայ » . բարեսէր և քաջահաւատ հոգին կրնար յուսալ արդարութեան երկնաւոր պսակին, անկէ՝ որ հոս տրուաւ իրեն երկրաւոր պսակը. զոր և դնելով 'ի վայր ընդ մէջ հանդերձեալ կենաց արշալուսոյն և մահուան ստուերներուն, հաւատարիմ քրիստոնէի ըզգաստութեամբ պատրաստեց զհոգին այն մեծ փոփոխութեան: Մինչդեռ որդիքն և սիրելիքն իրեն առողջութեան և հանգստեան խնամք կու մատակարարէին, ինքն ամենէն քաջահոգ՝ բերել տուաւ զքահանայապետն Հայոց, և միջնորդ կեցուց վերջին անգամ ընդ Աստուած և ընդ ինքն. վսեմ գլուխն անթագ խոնարհեցաւ խորին խոստովանութեամբ մարդկային բնութեան և մըտաց տկարութեան, և ընդունեցաւ Աստուծոյ օծելոյն ձեռքէն և բերանէն զկնիք և զաւետիս թողութեան և հաշտութեան. ընդունեցաւ մարգացեալ Անմահին երկրպագելի և փրկարար մարմին և արիւնն, և գոհացաւ զԱստուծոյ որ առաւել քան զթագն և զծիրանին արժանացուց զինքն այս սուրբ և անըման խորհրդոց, զոր ոչ ճանչցան և ոչ ճանաչեն կարծեցեալ գիտունք աշխար

հի և փետրագլուխ փիլիսոփոսը: — Որդւոց և մերձաւորաց ժառանգութենէն աւելի իր պաշտած հեզ ֆրիստոսին ժառանգակիցները հոգաց, աղքատները և կարօտեալները. և ոչ միայն դեռ շունչն վրան եղած ատեն բաժնել տուաւ լեցուն գանձեր ոսկոյ և արծաթոյ, այլ և յանձնեց կաթողիկոսին շատ ստակ և ըռզակ, ոչխարաց և նախրաց բազմութիւն, ձի և զրաստ, որ առատապէս բաշխէ եկեղեցեաց և վանորէից և որու որ արժան համարի, և ամէն տեղ իր հոգւոյն համար աղօթք և պատարագ ըսել տայ: — Հոգւոյն պէտքն լաւ հոգալով, զաւակաց և պայտազատացն այլ հարկաւոր խրատ և պատուէրները տալով, աւելի պահնչելի օրինակաւն քան վսեմակաւն խօսքովն, իբրեւ ամէն բան թուով և կարգով շարելով և շարժելով, ինչպէս որ բոլոր կենաց գործերն այլ անանկ կարգաւորեր էր, իբրեւ յետին կանոնաւոր և սահմանեալ գործ մը կատարեց անշփոթ զգաստութեամբ և վայելչութեամբ զմեռնիլն այլ... զոր գրեթէ ամենայն պատմիչք խոր զգացմամբ իմացընեն. «Եւ այսպէս ապա ըզ» պիտառուցեալ պէտս արտաբնոցս (ըստացուածս)՝ ի մաքրութիւն նորոգման ներքին մարդոյն անտեսաբար կենսացուցանէր: Եւ որոյ բարւոք ծերութեամբ ըստ բուսոյ բարեզգեաց բարուց՝ հանգեաւ ի ֆրիստոս»¹: — «Եւ զամենայն ինչ ըստ Աստուծոյ հաստատելոյ՝ փոխի ի կարգ սուրբ թագաւորաց»²: — «Զի էր այր քաղցր և հեզ և անարատ»³: — «Ալեւրեալ վախճանեցաւ աստուածպաշտութեամբ և լի հաւատով. և փոխեցաւ յաննայն թագաւորութիւնն երկնից»⁴: — «Փոխի յաշխարհէս ի բարիւք ծերութեան... քաջավայելչագոյնս զթագաւորութեանն կատարեալ լագործեալ զժամանակն»⁵:

Մեծին Աշոտոյ, (որ հիմայ ոմանց առիւծ մը կ'երևէր ի քուն ծանրութեան,

ոմանց սիրելի և ալեւոր հայր մը յընտանեաց մէջ նահապետօրէն վախճանած, ոմանց՝ դեռ թագաւոր ի մտածման հարկաւոր խորհրդոց, և ամենայն խոհական ճանչցողաց՝ արդարաւորով և մաքրակենցաղ մարդ մը վախճանեալ սրբութեամբ,) մեծահանգէս եղաւ և յուղարկաւորութիւնն. ինչպէս մեր հին թագաւորաց մէջ յիշուի միայն Տրդատայ և Բ Արտաշիսի: Երախտագէտ որդիքն և հպատակք անոր արժանեաց և պատուոյն ուղեցին համեմատելնաւ սգոյ հանդէսն և կազմուածքն. «ոսկէհուռ» հանդերձիւք և ոսկէզօծ վառիւք ըզ» դազալսն զարդարեալ» . զոր ֆարրս պատէն վերուցին տարին ի Բագարան, որ թագաւորանիստ քաղաք էր եղած, միանգամայն և յետին հանգստարան ոմանց ի Բագրատունի թագաւորաց, և նախ մեր Աշոտոյ, որ հաւանօրէն առաջուց հոն պատրաստեր էր իրեն հանդրստեան մատուռն և քնարանն: Բոլոր ճամբան այս երկու յիշեալ տեղեաց մէջ (որուն երկայնութիւնը չեմք գիտեր), հանդիսաբար յուղարկաւորութիւն եղաւ. Գէորգ կաթողիկոս՝ եկեղեցական դասակցութեամբ և պաշտօնէիւք և հոգևոր երգօք՝ առջիւնն երթալով. «և խումբք զօրաց զինուք և զարդուք, ընտրանօք և նշանակօք շուրջ պաշտպանեալք. իսկ դազալաց ետեւն և անմիջապէս մօտէն՝ կ'երթային իբրեւ սգազուիւք երեք թագաւորորդիքն, Շապուհ, Սահակ և Դաւիթ, (վասն զի երէցն Սմբատ չի կրցաւ հասնիլ ի Գուգարաց կողմէն,) և թագաւորին մերձաւոր ազգականքն և բարեկամք և պաշտօնեայք. ասոնցմէ վերջը, ըստ հին սովորութեան Հայոց, սգաւոր և սգաշարժ կուսանք և լացմայրք, երաժիշտք և ողբերգակք, թարգմանք և վկայք քաղաքական և բընական սգոյ և ցաւոց ընտանեացն, հայրենեացն և բոլոր պաշտպանեալ ազգաց. և այլ ետեւանց «Բազմութիւն ռամկացն և անռամկաց»: Եւ տին հանդէսներն այլ կատարելով ի Բագարան, «ապա» կազմեալ տապան թագաւորականն եղին զնա ի քնարանի հարց իւրոց» .

1 Յհ. կաթ:

2 Սամ. Անեցի:

3 Արտղիկ:

4 Յայտնաւորք:

5 Թով. Արծր:

իսկ յիշատակը՝ ինչպէս ՚ի սկզբան պատմութեանն ըսի, աստուածընտիր սրբոց հետ խառնեցին յեկեղեցիս Հայաստանեայց, ՚ի պատիւ նորա և ՚ի փառս ամենախնամն Աստուծոյ:

Աշոտոյ հանգստարանին և յիշատակին մնաք բարով չըսած, թերևս յետին բարև մ'այլ տալ վայելէ անոնց՝ որ իր պատմութեան և գործոց մէջ ստէպ կամ մեծապէս հանդիսացան. արդէն կենաց օրէնքն անոնց մէկ մասն յառաջ քան զԱշոտ վերուցեր ծածկեր էր աշխարհքիս տեսարանէն. վասիլ կայսրն հինգ տարի առաջ մեռեր էր և որդին լևոն իմաստասէր թագակցէր Աշոտոյ. բազմափորձանք պատրիարքն փոռ դրեթէ Աշոտոյ հետ կատարեց կեանքը, (894): Աշոտէն ընտրեալ և զԱշոտ թագաւոր օրհնող կաթողիկոսն Գէորգ, անոր անդրանիկ Սմբատն այլ օրհնեց, և անոր հետ տառապեցաւ Աֆշին բռնաւորկոտակալին ասպատակութեանց ատեն, ինչուան կապուեցաւ և բանաւցաւ և ազատեցաւ միջնորդութեամբ Համամայ՝ Աղուանից իշխանապետին, որ և իրրև զատ ազգի գլուխ՝ յետ Բագրատունեաց առաջին թագաւոր եղաւ. Գէորգ եօթն տարի յետ Աշոտոյ վախճանեցաւ (897): Տեղը զրեթէ հարկ էր որ դրուի աշխարհածանօթ և մեծահոշակ ճգնաւորն Սևանայ և այցակիցն Աշոտոյ՝ Մաշտոց, որ և իր անուանակից և գործակից (Ս. Մեսրոպայ-մաշտոցի) նման միայն վեց եօթն ամիս Հայոց հայրապետական աթոռը նստելով՝ մեռաւ նոյն տարին (897). և յաջորդ ունեցաւ իր ազգական և աշակերտը՝ Յովնան և ևս Պաւստիլը, որ մեր այս պատմութեան այլ գլխաւոր աղբերաց մէկն է:

Իսկ յիշխանաց և ՚ի մերձաւորաց Աշոտոյ՝ իր եղբայրն Սպարապետն Աբու Նախ քիչ մը դժուարացաւ եղբոր որդոյն հնազանդելու, և հակառակեցաւ թէ անոր և թէ վրաց կորապաղատին՝ Ատրնեբսեհի. յետոյ քիչ մ'այլ իր կալուածներն ընդարձակելով վանանդայ և Գուգարաց կողմերը՝ հանդարտեցաւ. և ինչպէս կ'երևի՝ քիչ տա-

րիէ վախճանեցաւ. իսկ Ատրնեբսեհ վրաց համար եղաւ ինչ որ Հայոց՝ իր բարերարն մեծն Աշոտ, ինքն այլ թագաւորական պատուոյ հասաւ, յետ Հայոց թագաւորին (Սմբատայ) երկրորդը կամ փոխարքայ անուանելու. և երկայն տեն իշխելով՝ իր աշխարհը շէնցուց և զօրացուց:

Աշոտոյ թոռներէն, Սիսական իշխանքն՝ ինչպէս իրեն նոյնպէս և Սմբատայ միշտ հաւատարիմ և հլու եղան, և ասոր պէս շատ նեղութիւն քաշեցին Աֆշինի և մանաւանդ անոր եղբոր Եուսուֆի բռնաբար ասպատակութեանց ատեն. իրենց բարեպաշտ և սիրելի մայրը, Մարիամ տիկինը՝ իրենց աշխարհին խնամակալ և պաշտելի անձի պէս հետերնին տանելով տեղէ տեղ բերդէ բերդ, և այն տարազիր տեղափոխութեանց մէջ մեռնելէն ետև այլ նոյնպէս մարմինը հետերնին տարին ինչուան որ բռնաւորն կորաւ, երկիրն խաղաղեցաւ, և դարձան ու Մարեմայ մարմինը հանգչեցուցին անոր ձեռակերտ եկեղեցւոյ մը մէջ: — Արծրունի թոռունքն Աշոտոյ՝ իրենց հօր պէս վառվռուն և անհանդարտ եղան. բայց անդրանիկն Աշոտ աւելի հաւատարիմ եղաւ Սմբատայ, և երիտասարդ վախճանեցաւ (29 տարուան). յաջորդն՝ իր եղբայրն Գագիկ՝ Արծրունեաց աշխարհաշէն և փառաւորիչ զիւլցազն ճանաչուի, բայց իր երկիրը ապահովելու համար՝ Յուսիայ (Եուսուֆ) հետ առանձին դաշինք գնելով և անկէ թագ առնելով, իր քեռիէն (Սմբատայ) զատուեցաւ, և ասով մեղադրելի է. միայն հոս յիշեմ որ Սմբատայ պատերազմին ատեն ընդ Ահմատայ որդւոյ Յիսէի, վատութիւն և մատնութիւն ընող ու թագաւորին յաղթուելու պատճառ եղող Գագիկն՝ սալէ, այլ Ապուսրուանն, որ շատ անգամ յիշուեցաւ պատմութեանս մէջ. և որ այս յիշեալ զիպուածէն քիչ վերջը սպանուեցաւ, որովհետև Արծրունեաց իշխանութիւնը կ'ուզէր ձեռք առնուլ:

Աշոտոյ որդիքներէն Սահակ իրմէ վերջը չը յիշուիր. Շապուհ Հայոց սպարա-

պետ եղաւ և տերանց Տէր, շատ շինու-
թիւններ ըրաւ իր սիրելի քրոջ Մարիա-
մայ երկիրներուն սահմանները. ինքն
այլ միւս եղբայրն Դաւիթ ալ դեռ տա-
րիքնին չառած մեռան և շատ սուգ պատ-
ճառեցին Սմբատայ:

Սա 24 տարի թագաւորեց, հօրը
շատ կատարելութիւններն ունենալով
և անոր արժանի պայազատ ըլլալով.
բայց անոր նահապետական հեղինա-
կութիւնն չէր կրնար ունենալ իր պաշտ-
պանութեան տակ եղած իշխանաց վը-
րայ, որք Աշոտոյ որդիք սեպուէին, իսկ
իրեն եղբարք հաւասարք, և քիչ մ'ի-
րենք իրենցմէ, քիչ մ'այլ 'ի Յուսիայ
և յօտարաց զրգուեալ՝ սկսան հեռանալ
միութենէն, իւրաքանչիւր իր երկիրը
կամ գլուխը հոգալով, որով Սմբատայ
ամէն ջանքն չյաջողեցան, և վերջապէս
յետ շատ առաքիւնի գործոց և աշխա-
տանաց, իր խորամանկ երդմնազանց
անգութ թշնամւոյն՝ Յուսիայ՝ անձնա-
տուր եղաւ. գերագոյն առաքիւնու-
թեամբ, իր հպատակները ազատելու
համար, և անկէջ այլ գերագոյն առա-
քիւնութեամբ մը մարտիրոսական քրտ-
միւնի տանջանաց համբերութեամբ և
արեամբ նահատակուեցաւ 'ի վերայ հայ-
րենեացն և սուրբ հաւատոցն (914), և
իր պապուն նման խոստովանող, և այլ
փառաւոր անուամբ և իրօք Նախարակ
կոչուեցաւ, և նշանագրեցաւ 'ի Յայս-
մաւուրս և 'ի Հայադիրն յութ մայիսի:

Այսպիսեաց հայր և որդի Մեծն Ա-
շոտ, այսպէս ապրեցաւ, գերազանց
քան զանոնք և քան զշատս յիշխանաց
և թագաւորաց՝ մեծագործութեամբ,
քաջութեամբ, բարեպաշտութեամբ,
խոհեմութեամբ, միանգամայն և յաջո-
ղութեամբ և փառք և սիրով ժամանա-
կակցացն և ապագայից. այսպէս գիտ-
ցաւ յարմարել խղճին, պատուոյ, ժա-
մանակին և հայրենեաց և ընկերաց օգ-
տին. այսպէս ազգայարոյց և ազգակե-
ցոյց անձն եղաւ, արժանի երախտա-
դիտութեան, զարմանաց և փառաց՝
աւելի քան մինչև հիմայ իրեն ընծա-
յուած, արժանի Հայոց նախաշար

անուանց դասակցութեան, արժանի
դիւցամեծար դրուատեաց և կրկնա-
փայլ անմահութեան: — Ո՛րչափ երջա-
նիկ և նախանձելի պիտի գրեմ գրեզ,
Հայկակ, եթէ օր մը կամ գիշեր մը, պայ-
ծառ արեւ մը կամ տխրախառն լուսին
մը լուսանան քեզի 'ի Բագարան, Ախու-
րեան գետոյն պզտոր պտուտից և անար-
ձագանգ կարկաջանաց քով. այն համառ-
փիւռ ջարդ ու բուրդ քարուցիր աւերա-
կաց վրայ, որոնք միջօրէ ատեն անգամ
սեւ ու սուգ կ'երեւին, մեծ հնոցէ մը խան-
կրած միտտած աղիւններուն նման. որոց
դիմաց քանի մը ժամ հեռու Անի՝ թա-
գաւորաց քաղաքն՝ դեռ պարիսպներով
և եկեղեցեզքն կիսականգուն կայ. Բա-
գարան՝ երբեմն չաստուածոց բնակա-
րան, յետոյ Բագրատունեաց արքայա-
րան և քնարան՝ գետնի հաւասար է.
Քարերն աւազ ու մոխիր դարձած,
մանրած թոռմած. միայն բերդի նշա-
նակ մը կ'երեւի քիչ մը բարձր. ծեր ու
մէջքը կորացեալ պահապանի նման մա-
շած աշտարակով մը, և չորս հինգ եկե-
ղեցեաց պատերու մասունք, և հազիւ
մէկ երկու արձանագիր, որոց հնագոյնն
այլ մեր Աշոտի մահուանէն դար մը վերջ
փորագրած է. մէկին մէջ գերեզման մը
կայ, զոր Ս. Գէորգի նշխարաց հանգր-
տարան ճանչնայ մօտաբնակ ժողովուր-
դըն, ուխտի կ'երթայ և ինդրուածքը
կ'ընդունի. բայց մէկայլոց քով այլ կան
հնացեալ լուռ գերեզմաններ, միակ
կանգուն չէնք Բագարանի, որք և ծած-
կեն զմեծագոյնն աւերակայ, զանցեալ
ազգս մեր նախահարց: Այն սևացեալ
շիրմաց մէկը կ'ուզեմ որ համբուրես,
վրան գտնելով՝ և չորս դի քարէ քար
թուփէ թուփ ալիքէ ալիք հնչեցընելով
զանունն Մեծն ԱՇՈՏ ԹԱԳԱՒՈՐ:

Հ. Ղ. Վ. Ա.